


Գ. ԳՍՐԿԱԾՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
Հ Ն Գ Ա Մ Յ Ա Կ Ը
Խ ՈՐ Հ Ր Դ Ա Յ Ի Ն
Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն ՈՒ Մ

Ա

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1929



Գ. ԳՄՐԴԱԶՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ
ՀՆԳԱՄՅԱԿԸ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

A 7989 16/91
6867



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1929

ՊԵՏՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հր. № 1044

Պատվ. № 823

Դրստ. № 873 (բ) — Տիրամ 3000

ԱՌՈՂՋԱՊԱԿԱԿԱՆ ԿՆԳԱՄՅԱԿԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1

Խորհրդային հնգամյակը մեր ժողովրդական տընտեսությունը վոչ միայն հասցնելու չե կապիտալիստական յերկրների տնտեսության, այլև գերազանցելու յե նրան:

Մեր յերկիրն արդեն վերականգնել է և արդյունաբերական ու գյուղատնտեսական վորոշ ճյուղերում նույնիսկ անցել նախապատերազմյան շրջանից: Այժմ մեր հնգամյակի հետագա անելիքները գնելու յենք այնպիսի նախամտածված հունի միջ, վորը մեզ անշեղ տանելու չե դեպի սոցիալիզմի հաղթանակը: Մակայն այդ վերակառուցման շրջանը նյութականից դատունի նաև ուրիշ դժվարություններ, վորոնցից աչքի ընկնողը, մեր ներկա դասակարգային պայքարի սրման շրջանում, աջ նացիոնալիստական վտանգն է, վորն այս կամ այն կերպ, հաճախ քողարկված, ամեն ջանք գործ եդնում վոչ միայն խանգարելու հնգամյակի կիրառումը կցանքում, այլև շեղելու նրա սլրոյնտարական ընթացքը: Այս ոպպորտունիստական տրամադրությունները, յուրահատուկ ձևերով, վերջերս ստացել են առանձին ախուժություն նաև մեր առողջապահական տապարիզում:

Մեր յերկրի առողջապահական հնգամյակը մի

փոքրիկ մասնիկն և ընդհանուր հնգամյա պլանի, վորի
իրապործման նախապատրաստական աշխատանքներին
եք նվիրված ս. թ. հունիսին առբաժինների և բոլոր հի-
վանդանոցներն զլիսավոր բժիշկների համահայաստա-
նյան համագումարը, ուր մանրամասն քննութեան լե-
թարկվեցին մեր յերկրի տողջապահութեան հնգա-
մյա պլանի չերկու վարիանտները:

Առաջին վարիանտում նախատեսված էր 10—
12⁰/₀-ով հավելում չուրաքանչյուր հետագա տարվա
համար, իսկ Համամիութենական Սորհուրդների վեր-
ջին համագումարի դիրեկտիվներին համաձայն, յերկ-
րորդ վարիանտում նախատեսվում է 30—40 տոկոս
հավելում:

Մեր հանրապետական և տեղական նյութական
միջոցները չափազանց սուղ են, իսկ մեր չերկրի ա-
ռողջապահական կարիքները՝ չափազանց մեծ. հնգա-
մյակը քննելուց հետո համագումարը միաձայն յեկամ
այն չեղրակացութեան, վոր բացի նյութական յեղած
հնարավորութեաններից, վորոնք նախատեսվում են
հնգամյակում, անհրաժեշտ և ստեղծել նայե՛վ արտա-
բյուջետային հնգամյակ:

2

Թորհրդային բժշկականութեանը չի լեւթադրվում
առանց աշխատավոր մասնատների լայն ու ահտիվ մաս-
նակցութեան, վորովհետեւ աշխատավորութեան առող-
ջութեանը կախված է հենց իբրանցից՝ աշխատավոր
զանգվածներից:

Այնինչ մենք գործ ունենք նաև հակառակ տիպի
մտածողների հետ, վորոնց կարծիքով աշխատավորու-

Թյան ահաիվ մասնակցությամբ առողջապահական ասպարիզում, շնորհիվ մեր ժողովրդի կուլտուրական հետամնացության, կարելի չէ գործին վնասել և վոչ թե ոգնել: Այդպես մտածողներն թիվը քիչ չեն բժիշկների մեջ: Վոր այդ կարծիք սխալ և և թերագնահատում և աշխատավոր մասսաների կարողությունն Եւ ընդունակությունը, պերճախոս կերպով ապացուցում են հետևյալ փաստերը:

Ղամարլի, Շամշադինի, Եջմիածնի և այլ շրջաններ, վորոնք իբրև համարվելիս են չեղել խիստ մալարիոս վայրեր և հսկայական ֆուսաներ են հասցրել տեղի ազգաբնակչության, ներկայումս, առանց պետական վորոշ հատկացումների, տեղերի աշխատավորության լայն ու ահաիվ ինքնագործունեյությունը այդ խիստ մալարիոտ շրջանները դարձրել և նվազ վտանգավոր: Վերոհիշյալ վայրերում մեր, բժիշկներն անմիջական զնկավարությամբ բառրահները, կոմսոմոլիստները, չքավոր ու միջակ գյուղացիներն արդեն չորացրել են մեծ քանակությամբ ճահիճներ և տարել են ինքնուրույն մասսայական պայքար մալարիայի դեմ:

Նույն ուրախալի չերևույթը մենք նկատում ենք նաև վորդերի (ճիճուների) դեմ վարած պայքարում: Մեր ազգաբնակչության մեծ մասը տառապում և ճիճուների հիվանդությամբ. կան վայրեր, ուր այդ հիվանդության տոկոսն ազգաբնակչության մեջ հասնում և 97-ի. սակայն այդ իսկ շրջաններում աշխատավոր գյուղացիության ինքնագործունեյության շնորհիվ այդ հիվանդությունը մ'ծապեա նվազել և. տեղ-տեղ նա իջել և 30--35 տոկոսի: Մի շարք գյուղերում, շնորհիվ բժիշկների տարած պրոֆիլակտիկ աշխատանքի, տեղի

աշխատավոր մասսաներն ըմբռնել են, վոր ճիճուներէ տարածման գլխավոր պատճառները արտաքնոցներէ բացակայութեանն եւ, ուստի և սկսել են մեծ թափով կառուցել իրենց բակերում արտաքնոցներ, վորով և պաշտար են մղում ճիճուների հիվանդութեան դէմ:

Նման որինակները, վորոնց թիվը բարերախտաբար քիչ չե, իրավունք են տալիս մեզ տառնց վորեւ տատանումների թե տալ մասսայական աշխատանքների ծավալման: Հակառակ գեպքում լոկ պետական հատկացումներով մենք չինք կարող մեր նպատակին հասնել, քանի վոր այդ ձևով շինարարութեանը, ուր չկա մասսայի գիտակցութիւն և ինքնաշխատանք, լայնանալ ու ծավալվել չի կարող. ընդհակառակը՝ յեղածն ել կարող ե վատնավել մասսաներից անջատ ու կարված քաղաքականութեանը ստեղծում ե անհոգութեան ու անտարբերութեան:

Չուր չե, վոր Միութեան բոլոր հանրապետութիւններում մասսայական աշխատանքները կազմում են մեր զործունեյութեան առանցքը, ստեղծելով նոր յեւ նոր արտաբյուջետային հնարավորութիւններ, ուժեղացնելով մեր առաջխաղացման թափը:

Չուր չե նաև, վոր գիտակից գյուղացիները, բուժօգնութեան սպասարկման ասպարհիդում, առաջադրում են գյուղական լայն աշխատավորութեան, ինքնահարկման միջոցով, կառուցել բուժկայաններ թանգարժեք չեկեղեցիների փոխարեն, իսկ պահել բժիշկ ու մանկաբարձուհի տերտերի ու տիրացուի փոխարեն, վորպեսզի բարելավեն իրենց կյանքը վոչ այն աշխարհում՝ Շղրախտում; այլ այս աշխարհում:

Յերկրորդ կարեւոր հարցը, վոր քննվեց համադումարում, դա բյուջեյի հատկացումների խնդիրն երբ վոչ միայն պետք է պահանջել մեծ հատկացումներ, այլև պետք է ունենալ սկզբունքային վորոշ մտայնում այդ հատկացումները բաշխելիս:

Պորհրդային առողջապահությունը կապիտալիստական յերկրների առողջապահությունից տարբերվում է նրանով, վոր նա իր գործունեյության հիմք ընդունում է պրոֆիտիկտիկան կամ կանխիչ միջոցները և այդ հիմունքներով էլ առաջնորդվում է կյանքում: Այս դիւրյալը համադումարն ընդունեց վորպէս հրամայական դիբեկտիվ:

Պորհրդային առողջապահության նախադրյալն է՝ չսպասել, վոր մարդը հիվանդանա և դա բժշկի մտտ, ալ բոլոր հնարավոր միջոցները գործադրել, վորպեսզի մարդը չհիվանդանա. ուրիշ խոսքով՝ կանխել ամեն տեսակի հիվանդություններ:

Ինչպէս վերը հիշեցինք, մասսայական հիվանդությունների պատճառները գտնվում են մեր շրջապատի, մեր աշխատանքի ու կենցաղի վատ պայմանների մեջ. ուստի և մեր հետագա բոլոր անելիքները պետք է ուղղված լինեն հիվանդության այդ պատճառներն արմատախիլ անելու կողմը: Այդ և պատճառը, վոր մեր առողջապահության ամբողջ գրվածքը ներկայումս վերակազմվում է ըստ դիսպանսերիզացիայի, այսինքն՝ ընդունում ենք մի ձև, վորով առողջապահական մարմինների աշխատանքները տարվելու յեն այնպէս, վորպեսզի հնարավորություն ունենանք կանխել հիվանդությունները:

Այս սկզբունքը հիմք է կազմում մեր հետագա բոլոր անելիքների: Մեր բուժոգնութեան և պրոֆիլակտիկ հիմնարկների վրա արվելիք ծախսերը չեն աճում հավասար, այլ պրոֆիլակտիկան, առկոսային հարաբերութեամբ, ավելի դրամ է կլանում, քան մեր բուժոգնութեանը: 1928/29 բյուջետային տարում սան. պրոֆիլակտիկ նպատակների վրա ծախսվել է 326.700 ուրբլի, իսկ 32—33 թ. նախատեսվում է ծախսել 1.118.500 ուրբլի. ասել է՝ պրոֆիլակտիկան 24 տոկոսից բարձրացել է 35 տոկոս:

Մալարիայի դեմ պայքարելու համար 28—29 թ. ծախսվել է 186.200 ուրբլի, իսկ 32—33 թ. կլանելու չի 772.000 ուրբլի՝ աճումը՝ 400 տոկոսով: Մակայն չսխառ է կարծել, վոր այդ ձևով մենք թուլացնում ենք մեր բուժոգնութեանը և պրոֆիլակտիկայի ծախսերի հավելումն իհաշիվ բուժոգնութեան է տեղի ունենում: Ա.մենեին վոչ: Մեր բուժոգնութեանը նույնպես ծավալվում է, և նրա ծախսերը նույնպես աճում են տարեցատարի: 28/29 թ. բուժոգնութեան ֆոնդը կազմում է 2.100.000 ուրբլի, այնինչ հնդամյակի վերջում՝ 5.255.100 ուրբլի. յերեք անգամ ավելի: Ճիշտ է աճումը կա, սակայն նրա տոկոսային հարաբերութեանը 71-ից իջնելու չի 64-ի:

Հնդամյա հատկացումների այս ներքին բաշխումը եամարյա նույն տոկոսային հարաբերութեամբ նախատեսված է նաև հարևան հանրապետութեանների, ինչպես և Ռուսաստանի ու Ռևրայինայի անողջապահութեան հնդամյակում:

Առողջապահությունը կրել է յեզ պետք է կրի դասակարգային ընտյթ, քանի գոյություն ունեն դասակարգեր յեզ դասակարգային պայքար: Վոչ մի տեղ գոյություն չունի և չի յել կարող ունենալ ապադասակարգային մոտեցում առողջապահության ասպարիզում:

Այդ է պատճառը, վոր մեր հնգամյա պլանով նախատեսված բաշխումները նախ և առաջ ապահովում են քաղաքի և գյուղի սոցիալիստական զանգվածների սպասարկումը (բանվորական շրջաններ, կուլ. և սովխոզներ), ապա միայն մեր մշուս կարիքները:

Ճիշտ է, մեր արդյունաբերական հիմնարկները հնարավոր յեղած սահմաններում սպասարկվելու յեն՝ դիսպանսերիզացիայի յենթարկելով արտագրական բանվորների կադրերը, բայց հողիվ թե այդ բանը մենք կարողանանք լիուլի բավարարել, յեթե այդ խընդրում, գոնե շինարարության ասպարիզում, ոգնության չհասնի ժողտնտխորհր:

Քաղաքի և գյուղի սոցիալիստական զանգվածների սպասարկման խնդրում մեր առողջապահական մարմինները չեն կարող մնալ լուկ հանդիսատեսի դերում, քանի վոր մեր կուսակցության բոնած զիծն ստեղծում և հսկայական պրոֆիլակտիկ բազա: Լենինն այդ առթիվ ասում է. «Զի կարելի ալլևս ապրել ահնպես, ինչպես ապրում ելին մինչ պատերազմը: Զի կարելի ալլևս անիմաստ վասանել մարդկային ուժն ու աշխատանքը, վորոնք կապված են մանր ու անջատ գյուղացիական տնտեսությունների հետ: Յերկու, յե-

րեք անգամ ավելի կրարձրանա աշխատանքի արտադրողակարունությունը, լերկու, յերեք անգամ հնարավոր կլինի խնայել մարդկային եներդիւան ու աշխատանքը հողագործության և այլ տնտեսությունների մեջ, յեթի այդ ցրելու մանր տնտեսությունները վերածվեն հասարակական (կոլլեկտիվ) տնտեսությունների»:

5

Այժմ տեսնենք, թե ինչ է նախատեսում հնգամյա պլանը մեր լերկրի առողջապահական բնագավառում:

Մեր բուժողունության հնգամյա պլանով՝

	28/29			29/30			30/31			31/32			32/33		
	Ֆազաթ.	Գյուղ.	Կուրորտային												
Հնդհանուր մանձակալ. թ.	705	281	327	775	302	362	840	326	577	915	336	825	980	361	825

Հնգամյակի վերջում մեր լերկրի մանձակալների թիվը քաղաքներում աճելու չէ 20 տոկ., գյուղերում՝ 35, իսկ հանրապետական նշանակություն ունեցող մանձակալները՝ 250 տոկ.: Ամբողջ Հայաստանում մոտավորապես 60 տոկոսով: Գլխավորապես աճելու չեն կուրորտային մանձակալները: Այնինչ քաղաքներում, և մանավանդ գյուղերում, այդ աճեցողությունը շատ աննշան է:

Հաս վիճակագրական ավյալների մեր յերկրի ազգաբնակչության թիվը հնդամյակի վերջում լինելու յե մոտ 1.150 հազար:

Այնպես վոր յուրաքանչյուր 10.000 հոգուն նախատեսվում է՝ քաղաքներում 42,6 մահճակալ, գյուղերում 3,9, իսկ վողջ Հայաստանում՝ 12,4: Մինչդեռ 1928 թ. Խորհրդային Հայաստանում նույն թվով ազգաբնակչության ընկնում եր՝ քաղաքներում 36,0 մահճակալ, գյուղերում 3,5, իսկ վողջ Հայաստանում 10,0: 1927—28 թվին ԽՍՀՄ 10.000 ազգաբնակչության ընկնում եր՝

Քաղաքներում, 49,0 մահճակալ.

Գյուղերում 4,7 »

Վողջ ԽՍՀՄ 12,9 »

27—28 թվին ՌՍՖՍՀ 10.000 ազգաբնակչության ընկնում եր՝

Քաղաքներում 60,0 մահճակալ.

Գյուղերում 5,1 »

Վողջ ՌՍՖՍՀ 15,4 »

Ասեւ է՝ ԽՍՀՄ 29 տակոսով, իսկ ՌՍՖՍՀ 54 տակոսով ավելի մահճակալ ունի, քան Հայաստանը:

ՌՍՖՍՀ-ի Առժողկոմատը շեշտում է իր բուժօգնութեան հետամնացութունը:

Մեր բուժօրինարկների դանդաղ աճման գլխավոր պատճառն այն է, վոր մեր յերկրում ամեն ինչ նոր է շինվում: Տն րական և դաշնակցական շրջանում շատ քիչ աշխատանք է տարված յնդել մեր ժողովրդի առողջապահութեան վրա:

Յերկրորդ հիմնական պատճառը տեղական բյուջելի փոքրութիւնն է. մեր յերկրի արդունարերու-

թւան մեծ թուիչքը խորհրդային իրավակարգի հետ և կապված:

Մեր յերկրի բուժողունության գործում հատուկ տեղ են բռնելու հողեկան և տուբերկուլյոզային հիվանդները: Մինչև այժմ մենք չունենք վոչ միայն հոգեկան հիվանդների և տուբերկուլյոզի հատուկ հիվանդանոց իրենց հարմարություններով, այլև չունենք մահճակալների փոքր իշատեքավարար թիվ: Տուբերկուլյոզային մահճակալներ, մեր տերրիտորիայի վրա, հնգամյա պլանով նախատեսվում են 60, այն ել 30 թվականից. նրանց թիվը հնգամյակի վերջում հասնելու յե 150-ի: Իսկ հողեկան հիվանդների մահճակալների թիվն ավելանալու յե ընդամենը 150-ով: Ինչպես տեսնում եք, նախատեսված թվերն անբավարար են մեր իրական կարիքների հանդեպ:

Պաշտոնական տեղեկություններով հստատված է, վոր մեր յերկրի հողեկան հիվանդների թիվը 2500-ից ավելի յե, վորից ցուցակադրվածները մոտ 2000 հոգի յին և զոնի մեծամասնությունը հերթի յե սպասում:

Ինչ վերաբերում է տուբերկուլյոզով հիվանդների թվին, տարեկան առնվազն ունենք 5000 հոգի, վորոնք վարակի տեսակետից վտանգավոր են, և պահանջվում է նրանց մեկուսացումը:

Մեր յերկրի ցուցակադրված բորոտների թիվը հաշվում են 200, և նրանց համար մինչև այսոր չունենք հատուկ վայր, ուր հնարավոր լինեք մեկուսացնել այդ չափազանց վտանգավոր հիվանդներին: Թեև համակովիասյան մասշտաբով Շամախում հիմնվում է մի բորոտանոց յերկու հարյուր հոգու համար, ուր պիտի կենտրոնացվեն Ադրբեջանի, Վրաստանից ու Հայաստանից

տանից ուղարկված բորոտները, բայց և այնպես դրանով ևս մեր յերկրում հատուկ բորոտանոց ունենալու պահանջը չի վերանում:

Մոր և մանկան պաշտպանության գործը կապված է խորհրդային իրավակարգի հետ: Նախապատերազմյան շրջանում այս խնդրի վրա բնավ ուշադրութիւն չի դարձվել: Ներկայումս նրա աճումը միութենական մասշտաբով չտարածանց մեծ է, մանավանդ մեծ է լինելու հնգամյակի վերջում:

Հնգամյակի վերջում մոր և մանկան պաշտպանության աշխատանքները մեր յերկրում հետևյալ պատկերն են ներկայացնելու:

1. Մ ա ու ը ն ե ր

Տարիներ	Մանուկների ընդհանուր թիվ 0—4 տար. հասակը		Մահճակալների թ.		Տոկոսային հարաբերութիւն	
	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղ.	Գյուղ
1928—29	26 հազ.	158 հազ.	135	275	0,5	0,1
29—30	27 »	157 »	350	635	1,3	0,4
30—31	28 »	162 »	470	875	1,7	0,5
31—32	29 »	167 »	595	1340	2,0	0,6
32—33	30 »	172 »	680	1750	2,2	1,0

Աճման թափն ակնհերև է, սակայն, ինչպես տեսնում ենք, հնգամյակի վերջում քաղաքներում ընդգրկելու չե մանուկների միայն 2,2, իսկ գյուղերում՝ 1 տոկոսը:

2. Կ Ո Ն Ս Ո Լ Լ տ ա ց ի ա

Տարիներ	Մանուկների ընդհանուր թ. 0—4 տար. հասակը		Կոնսուլտացիաների թիվը		Տոկոսային հարաբերություն	
	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ	Քաղ.	Գյուղ
1928—29	26 հ.	153 հ.	4860	2700	18,6	1,7
29—30	27 »	153 »	5400	4620	20,0	2,9
30—31	28 »	163 »	7020	8020	25,0	5,0
31—32	29 »	167 »	9180	10380	31,0	7,0
32—33	30 »	172 »	9720	12,680	32,4	8,0

Անշուշտ, դեռևս չափազանց հեռու յենք մեր մանուկների նվազագույն կարիքները բավարարելուց, բայց և այնպես տարեցտարի մեծ նվաճումներ ունենք այդ ասպարիզում:

Մ ո Ր և մ ա ն կ ա ն հ ի մ ա Ր կ ն եր ի ց ա ն ց ի ա ճ ու մ ը:

	28—29		32—33	
	Քաղաք	Գյուղ	Քաղաք	Գյուղ
Հիմնարկներ	17	20	74	129

1928 թվին ընդհանուր ծախք լեղել է 164.900 ուրլի, իսկ 33 թվին ծախսվելու յե 970.600 ուրլի: Թոիչքը, ինչպես տեսնում եք, մեծ է:

Սան. լուսավորության գործը մեզանում դեռևս նոր է, և նրա կարևորութունը բավարար չափով չի ըմբռնված մեր մասսաների առողջապահական դաստիար-

բակման գործում: Հարկավոր է լուրջ ուշադրութիւն դարձնել և աշխատել գոնե մեր հինգ կենտրոնական շրջաններում ստեղծել սան. լուսավորութեան տներ, վորոնց միջոցով կարողանանք ամրապնդել պրոֆիլակտիկայի դերն առողջապահութեան և առհասարակ հիվանդութիւնների դեմ մղվելիք պայքարում:

Հնգամյակի վերջում մեր յերկրի ատամնաբուժական գործն անում է 150 տակտով: Նախատեսվում է քաղաքներում ունենալ 32 բաղկաթոռ, իսկ շրջաններում՝ 30, ընդամենը 62 բաղկաթոռ: Քաղաքներում 28 թվին ամեն մի բաղկաթոռին ընկնում էր 10.025 մարդ, իսկ շրջանում՝ 99.900. Հնգամյակի վերջում այդ թվերն իջնում են՝ քաղաքներում՝ 7,188-ի, իսկ գյուղերում՝ 28.625-ի:

Յեթե մեր յերկրի նվազագույն պահանջները թվերի վերածելու լինենք, կստանանք՝

ա. Մ ա հ ճ ա կ ա լ ն ե ր

Տարիներ	Ընդհանուր մահճակալների թիվը			
	Քաղ.	Գյուղ	Կուլտուրային մահճակալներ	Գումար
1928—29	843	229	327	1072
1932—33	1610	600	1650	2210

Ասելի՛ ազգաբնակչության յուրաքանչյուր 10.000
հոգուն ընկնելու լի՛

Տարիներ	Քաղաք	Գյուղ	Վարչ հան- րայնաու- թյան
1928—29	36,6	2,6	9,5
1932—33	56,1	6,6	16,5

Հնգամյակի վերջում մեր մահճակալների թիվը
համարյա թե համասարվում է ՌՍՖՍՀ 27—28 թվի
մահճակալներին:

բ. Բժիշկներ թիվը

Տարիներ	Քաղաք	Գյուղ	Ընդամենը
1928—29	195	72	267
1932—33	480	203	689

Թուրքաբանչյուր բժշկին ընկնում է

Տարիներ	Քաղաք	Գյուղ	Հոնք. մասը.
1928—29	1029	11,100	3744
1932—33	478	4,512	1,668

Տարբերութունը բավականին շոշափելի լի:


Յուրաքանչյուր գեղատան և ատամնարու-
ժինը նկնում է

Հիմնարկներ	Դեղատուն		Ատամնարուժ	
	Բաղաք	Գյուղ	Բաղաք	Գյուղ
1928—29	18,227	72,654	10,025	99,900
1932—33	17,693	50,889	7,188	28,625

գ. Առողջապահության հն գամյա բյուջեն

Հիմնարկներ	Տարիներ	
	28—29	32—33
1. Բուժ. հիմնարկներ	2 001.000	5.255 100
2. Ման. պրոֆիլակ. և սոց. հիվանդութ.	326.700	1.118.500
3. Պաշտար մալարիայի դեմ	186.200	772 000
4. Մայր. և մանկ. բաժին	164.900	970.600
5. Վարչա-տնտեսական	144.500	185 900
Դուժար	2.823 300	8.302.170

Հնգամյակի վերջում տոկոսային հարաբերությամբ
 անել են՝ բուժօգնությունը՝ 162,6 տոկոսով, ման. պրո-
 ֆիլակաիկան՝ 268,6, պաշտար և մանկության՝ 488,6
 տոկոսով:



Իսկ յեթե վերցնելու լինենք բուժական, պրոֆի-
լակտիկ և վարչա-տնտեսական ծախքերի տոկոսային
հարաբերությունը, մենք կտանանք.---

Տարիներ	Բուժող- նություն	Սան. պրո- ֆիլ.	Վարչա տնտես.
1928—29	70,9	24,0	5,1
29—30	64,7	32,9	2,4
30—31	62,7	34,9	2,4
31—32	61,2	36,8	2,0
32—33	63,4	35,0	2,2

դ. Շինարարությունն առողջապահության
ասպարիզում.

Տ ա ր ի ն ե ք					Ընդհա- նուր գումար
1928 29	29—30	30—31	31—32	32—33	
350 հազ.	1.026 հ.	1.188 հ.	1.287 հ.	1.392 հ.	5.793 հ.

Վորպեսզի կարողանանք իրականացնել հնգա-
մյա պլանը հարկավոր տոկոսով, անհրաժեշտ և հատուկ
ուշադրություն դարձնել բուժ-սանիտարական աշխա-
տակիցների վորակյալ կազմ օտեղծելու վրա: Ներկա-
յումս մեր բժիշկների և ստորին ծառայողների քա-
նուկն անբավարար և: Ծավալվող աշխատանքները պա-
հանջում են աշխատակիցների ավելի մեծ թիվ: Այդ
մեծ կարիքը լրացնելու համար մեր Առժողկոմատը

միջոցներ և ձեռնարկել՝ առաջիկա ուսումնական տար-
վանից բժշակի ուսանողների թիվն ավելացնել 50
տակոսով:

Բուժ-սանիտարական աշխատակիցներին հարկա-
վոր հազր ստեղծելու համար անհրաժեշտ և նաև լուրջ
ուշադրութուն դարձնել աշխատավարձի քարձրացման
մաս: Հնդուստանի վերջը առողջապահական ասպարի-
բում գործող աշխատակիցների աշխատավարձը նախ
պիտի բոլոր հանրապետութունների մեջ հավասարեց-
նել, ապա նրա քանակը հասցնել նախապատերազ-
մյան շրջանի աշխատավարձին:


Միջին աշխատավարձը սան-հիմնարկներում

	29—30		32—33	
	Բաղաք	Գյուղ	Բաղաք	Գյուղ
Բժիշկներ, վարչ- բարձր ծառ.	150	160	210	230
Առաջնաբույժներ	100	110	150	165
Առաջնաբույժ տեխնիկներ	130	140	160	170
Մանկաբարձու- հիներ	60	65	85	95
Գլխավոր ջուշ- րեր	55	60	75	85
Սանիտարներ	45	40	60	60
Տնտեսավարներ	100	100	140	140
Մտորին ծառա- յողներ	40	40	55	55

Հրապարակի վրա գնելով մեր յերկրի առողջապահութեան հնգամյակը մատեններին հասկանալի ապարդ թվերով, պիտի ասենք, վոր նրա անժամ անմաքը համեմատած հարևան հանրապետութեաննրի հետ, շատ բարձր է: Դրա ուլխաժոր պատճառն, ինչպես ասացինք, այն է, վոր առողջապահութեան, ինչպես և մյուս բնագավառներում, ամեն ինչ մենքնոր ենք շինում, մինչդեռ այլ հանրապետութեաններում նրանք արդեն գոյութեան ունեյին:

Մեր յերկրի առողջապահութեան մեծ թռիչքը յերևում է նաև այն հատարակ փաստից, վոր ազգաբնակչութեան յուրաքանչյուր հոգու վրայ ցարական ժամանակ ծախսվել է 19 կոպեկ, 28 թ. մենք ծախսել ենք 3 Պուլըլի 6 կոպեկ, իսկ հնգամյակի վերջում այդ ծախսը հասնում է 7 ա. 22 կոպեկի:

Սա իսկապես մեծ թռիչք է, վոր կարճ ժամանակամիջոցում արել է Խորհրդային Հայաստանի բանվորա-դուրգացիական կառավարութեանը:





ԸՆԳՎԱՆՈՒՐ ՏՈՒՑԱՐԳՐԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

Տարիներ	Ընդամենը մանճակալները թիվը	Յերիցաներ - առ, աք զմ	Զմ զմ զդրոյակի	Զմ զմ զդրոյակի - առ, աք զմ	Մեր յերկրի տարեկան բյուջեն	Շինարարական հատկացումները	Մե հոգու զլրա յերոսժ ծախքը				
1918	124	---	---	---	---	---	---	---	176,680	---	19 կոպ.
1920	204	277	277	277	277	277	277	---	---	---	---
1928	843	329	327	325	277	4860	2700	195	2,923,310	650,000	3 ռ. 6 կ.
1933	1610	600	1650	680	1750	9730	12680	450	8,802,100	1,892,000	7 ռ. 25 կ.









ԳԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0044633

(054)

A 7989

ԳԻՆՆ Ե 8 ԿՈՊ.